British Embassy Yerevan

Շվեդիա Sverige

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

UNDP

UKaid from the British people

ICHD Մարդկային զարգացման միջազգային կենտրոն International Center for Human Development

WFD WESTMINSTER FOUNDATION FOR DEMOCRACY

oxYGen

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Համառոտագիրը պատրաստվել է ՕքսԵՋԵՆ հիմնադրամի կողմից ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը համաիրականացվում է ՕքսԵՋԵՆ հիմնադրամի, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Ժողովրդավարության Վեսթմինսթր հիմնադրամի հետ՝ ՀՀ Ազգային ժողովի հետ համագործակցությամբ: Ծրագիրն իրականացվում է Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» և Շվեդիայի կառավարության ֆինանսական օժանդակությամբ:

Փաստաթղթում արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՄԱԶԾ-ի կամ ծրագրի այլ գործընկերների տեսակետները:

2021 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ..... 5
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ..... 6
Սեռական բռնություն 6
Ֆիզիկական բռնություն 6
Էմոցիոնալ և հոգեբանական բռնություն 7
Վերահսկողական վարք 8
Վտանգավոր ծիսակատարություններ 8
Ներընտանեկան բռնություն 8
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ԵՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ..... 13
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գենդերային բռնությունը բարդ երևույթ է, որը սերտորեն կապված է հասարակության ձևավորման, մշակութային արժեքների, տնտեսական անհավասարության և արական սեռի գերակայության վերաբերյալ մարդկանց պատկերացումների հետ: Գենդերային բռնությունը տեղի է ունենում ցանկացած հասարակությունում, և այն կանանց սոցիալական, հոգեբանական և տնտեսական ստորադասության արդյունքն է: Այն զարգացել է աննկատելիորեն, քանի որ մինչև վերջին 20 տարիները տվյալ երևույթի գոյությունը համապարփակ ճանաչում չէր ստացել:

Գենդերային բռնությունը ոչ միայն բացասաբար է ազդում կանանց և աղջիկների կյանքի վրա (ովքեր մեծամասնություն են կազմում բռնության ենթարկվածների շրջանում), այլև տղամարդկանց և տղաների զարգացման համար խոչընդոտ է հանդիսանում: Գենդերային բռնության և գենդերային անհավասարության վերացումը կնպաստի հասարակության ամրապնդմանը:

Թեև այսօր չկա գենդերային բռնության մեկ համընդհանուր սահմանում, այնուամենայնիվ այն կարելի է բնութագրել, որպես սեռով պայմանավորված ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական բնույթի որևէ բռնության կիրառում:

Գենդերային բռնություն. *«բռնություն, որը կնոջ նկատմամբ դրսևորվում է նրա կին լինելու պատճառով կամ որն ազդում է կնոջ վրա անհամաչափորեն»*

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի (CEDAW) թիվ 19 Գլխավոր հանձնարարական, 1992թ.

Գենդերային բռնությունը համարվում է մարդու իրավունքների ոտնահարման ձևերից մեկը: Գենդերային բռնության ենթարկվածների ճնշող մեծամասնությունը կանայք են: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ գենդերային բռնությունը խորապես արմատավորված է և արտահայտվում է կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների առկա անհավասարությամբ:

Գենդերային արդարության և հավասարության բացակայությունը, ինչպես նաև գենդերային կարծրատիպերն ու խտրականությունը գենդերային բռնության հիմք են դառնում:

ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համաձայն մարդու իրավունքների միջազգային չափանիշների, պետությունները պետք է ամեն ջանք գործադրեն կանխելու հավասարության, կյանքի, ազատության և անվտանգության, խտրականությունից, խոշտանգումից կամ դաժան, անմարդկային ու այլ նսեմացուցիչ վերաբերմունքից զերծ լինելու իրավունքների ոտնահարումները: Եթե պետությունները համապատասխան քայլեր չեն ձեռնարկում այսպիսի բռնությունը կանխելու կամ հետաքննելու և դատական հետապնդման ենթարկելու ուղղությամբ, նրանք կարող են համարվել կանանց իրավունքների ոտնահարման մեղսակից և այդ իրավունքները խախտող կողմ: Այդ իսկ պատճառով պետությունները, ինչպես օրինակ Հայաստանը, պետք է ակտիվ քայլեր ձեռնարկեն քաղաքական օրինագծեր, ծրագրեր, կատարողականներ, բյուջեներ և կիրառման մեխանիզմներ ստեղծելով, որպեսզի այս իրավունքներն իրագործվեն, անձինք այս իրավունքների ոտնահարումից պաշտպանված լինեն, իսկ այն մարդիկ, ում իրավունքները ոտնահարվել են, փոխհատուցվեն:

- Համաշխարհային մասշտաբով, **կանանց 35 տոկոսը երբևէ ենթարկվել է ֆիզիկական և (կամ) սեռական բռնության իր զուգընկերոջ կողմից**, կամ սեռական բռնության անծանոթի կողմից: Որոշ երկրներում թիվը ավելի բարձր է, և այն դեռ չի պարունակում սեռական ոտնձհությունները աշխատանքի վայրում:
- Որոշ երկրներում թեժ գծերին զանգերը հինգ անգամ ավելացել են, քանի որ հաղորդվում է **ինտիմ գործընկերների կողմից բռնության դեպքերի աճը COVID-19 համաճարակի պատճառով**:
- **137 կին ամեն օր սպանվում է** իրենց ընտանիքի անդամի կողմից:
- Բռնության ենթարկված կանանց միայն 40 տոկոսն է օգնության դիմում:
- **Մեծահասակ կանանց գրեթե կեսը (49 տոկոսը) թրաֆիքինգի զոհեր են**. Կանայք և աղջիկները միասին կազմում են 72 տոկոս, ընդ որում **աղջիկները թրաֆիքինգի յուրաքանչյուր չորս զոհերից երեքն են**: Կանանց և աղջիկների մեծ մասը թրաֆիքինգի է ենթարկվում սեռական շահագործման նպատակով:
- 2019 թ.-ին 20-24 տարեկան **յուրաքանչյուր հինգերորդ կինն ամուսնացել է մինչև 18 տարեկան դառնալը**:
- Առնվազն 200 միլիոն կին և աղջիկ, 15–49 տարեկան, ենթարկվել են կանանց սեռական թլպատման 31 երկրներում:

- Ամբողջ աշխարհում **15–19 տարեկան 15 միլիոն երիտասարդ աղջիկներ ենթարկվել են բռնի սեռական հարաբերության**:
- Եվրամիության երկրներում **յուրաքանչյուր 10 կանանցից մեկը** հայտնում է, որ 15 տարեկանից ի վեր **ենթարկվում է կիբեր սեռասկան հետապնդումների:**
- Ամբողջ աշխարհում **կին պատգամավորների 82 տոկոսը** հայտնել է, որ իրենց լիազորությունները կատարելու ընթացքում ենթարկվում են **հոգեբանական բռնության:**

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Գենդերային բռնության տեսակները բազմաթիվ են: Ստորև ներկայացված են առավել հաճախ հանդիպող 6 տեսակները.

ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Սեռական բռնությունը՝ սեռական ցանկացած գործողությունն է կամ փորձը՝ ուղղված սեռական հարաբերություն ունենալուն, անցանկալի սեռական մեկնաբանությունները կամ ոտնձգությունները կամ թրաֆիքինգի ենթարկելու կամ անձի սեռականության դեմ ուղղված գործողությունները՝բռնության օգտագործմամբ:

Բռնության և առողջության մասին համաշխարհային զեկույց, ԺՆԱ, 2002թ

Սեռական բռնության տեսակներն են.

- Բռնաբարություն և ամուսնական բռնաբարություն
- Երեխաների սեռական այլասերում
- Հարկադրական սոդոմիա
- Բռնաբարության սոդոմիա
- Սեռական շահագործում
- Հարկադրված մարմնավաճառություն
- Սեռական ոտնձգություն

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Ֆիզիկական բռնության տեսակներն են.

- Ֆիզիկական հարձակում (ծեծել, բռունցքով և ոտքերով հարվածել, ապտակել, հրել, կծել, այրվածք առաջացնել, սպանել զենքով և առանց զենքի)
- Մարդկանց վաճառք և ստրկություն:

Ֆիզիկական բռնությունը ներառում է ֆիզիկական ուժի կամ զենքի նպատակային օգտագործումը՝ կնոջը վնասելու կամ վիրավորելու նպատակով:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ուսումնասիրությունից

■ ԷՄՈՑԻՈՆԱԼ և ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Հոգեբանական բռնությունը ներառում է վարկաբեկող կամ արհամարհող վերաբերմունքը, զգացմունքային շանտաժը, այդ թվում՝ վիրավորանքը և սպառնալիքը, ահաբեկումը, ագրեսիվ բղավոցը, զրպարտությունը, վախեցնելը, նվաստացումը և «հոգեբանական ահաբեկչությունը»

Էմոցիոնալ և հոգեբանական բռնության տեսակներն են.

- Վիրավորանք, ստորացում,
- Ազատությունից զրկել (ազատ գործելու իրավունքի սահմանափակում):

■ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական բռնությունը կարելի է բնութագրել, որպես մի գործողություն կամ վարք, որը տնտեսական վնաս է հասցնում անհատին

Տնտեսական բռնությունը կարող է լինել, օրինակ, գույքային վնասի, ֆինանսական ռեսուրսների, կրթության կամ աշխատաշուկայի հասանելիության սահմանափակման կամ տնտեսական պարտականությունների, օրինակ՝ ալիմենտը չվճարելու ձևով:

Սոցիալ-տնտեսական բռնության բնորոշ ձևերը ներառում են զոհի վաստակը խլելը, նրա առանձին եկամուտ չունենալը (տնային տնտեսուհու կարգավիճակ տալը կամ ընտանեկան բիզնեսում առանց աշխատավարձի աշխատեցնելը) կամ նպատակային ֆիզիկական բռնության միջոցով անաշխատունակ դարձնելը:

Տնտեսական բռնությունը կարող է անխուսափելի վնաս բերել կնոջ ապահովությանը, առողջությանը կամ բարեկեցությանը:

ՄԱԿ-ի գլխավոր ասանբլեայի 58/ 147 որոշումից

Սոցիալ-տնտեսական բռնության տեսակներն են.

- Խտրականություն և/կամ հնարավարությունների, ծառայությունների մերժում,
- Իրավական բնույթի խոչընդոտներ, և որպես հետևանք աղքատության ֆեմինիզացում (կանանց ընդհանուր առմամբ տնտեսապես ավելի խոցելի դարձնելը:

ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՎԱՐՔ

- Հարձակման, սպառնալիքների, նվաստացման և ահաբեկման կամ այլ չարաշահումների գործողություններ որոնք օգտագործվում են զոհին վնասելու, պատժելու կամ վախեցնելու համար:
- «Վերահսկող վարքը գործողությունների մի շարք է, որը նախատեսված է մարդուն ենթակա և (կամ) կախվածության մեջ դնելով՝ մեկուսացնելով նրանց աջակցության աղբյուրներից, օգտագործելով նրանց ռեսուրսներն ու կարողությունները անձնական շահի համար, զրկելով նրանց անկախության, դիմադրության և փախուստի համար անհրաժեշտ միջոցներից և կանոնակարգելով նրանց առօրյա վարքը»:

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կանացի սեռական օրգանների վնասում, թլպատում,
- Վաղ ամուսնություն,
- Հարկադիր ամուսնություն,
- Սպանություն պատվի համար, խարանում,
- Երախաների սպանություն կամ անտեսում՝ պայմանավորված սեռով,,
- Սեռով պայմանավորվցած հղիության արհեստական ընդհատում,
- Կանանց և աղջիկների կրթության խոչընդոտում:

Գենդերային և սեռական բռնությունը առաջանում է բոլոր դասակարգերում, մշակույթներում, հավատքներում, ռասաներում, յուրաքանչյուր սեռում, տարիքում և կարող է խոչընդոտել կայուն զարգացմանն ուղղված նույնիսկ ամենավճռական քայլերը և արգելակել ժողովրդավարական արժեքներ որդեգրած առողջ և բարգավաճող հասարակության առաջընթացը մարդու իրավունքների, այդ թվում կանանց իրավունքների հարգման և պաշտպանության ուղիով:

ՆԵՐԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Ներընտանեկան բռնությունը կանանց հանդեպ բռնության տեսակներից մեկն է:

Բռնությունը նվազեցնում է կնոջ ինքնուրույնությունը: Աշխարհի շատ մասերում ամուսնությունը համարվում է կանանցից օգտվելու սեռական անսահման հնարավորությունների տրամադրում տղամարդկանց, մի «իրավունք», որն անհրաժեշտության դեպքում կիրառվում է ուժի միջոցով:

> *Ներընտանեկան բռնություն է համարվում ընտանիքի անդամների, այդ թվում սեռական զուգընկերների՝ միմյանց նկատմամբ կիրառվող ֆիզիկական, հոգեբանական, սեռական կամ տնտեսական բռնությունը:*

Ներընտանեկան բռնությունը ձեռքբերովի վարքագիծ է **(բռնացողը տեսել է դրա դրսևորումները տանը, ընտանիքում, համայնքում, դպրոցում, ընկերական շրջապատում և ընդօրինակում է համարելով ազգային յուրահատկություն)**: Դա կարող է խորանալ (ոչ թե առաջանալ) հիվանդությունից, ժառանգականությունից, ոգելից խմիչքներից և թմրանյութերից, ինքնատիրապետման պակասից, տնտեսական խնդիրներից, զայրույթից, սթրեսից, հարաբերության մեջ զոհի վարքագծից կամ խնդիրներից:

Ներընտանեկան բռնությունը երկար ժամանակ դիտարկվում էր որպես միայն անհատի կյաքին վերաբերող մի երևույթ, որի հաղթահարումը չի մտնում պետության գործառույթների մեջ:

Ներընտանեկան բռնությունը գենդերային ստորադասության արդյունք է: Չորս խնդիրներ են մշտապես կապվում ներընտանեկան բռնության բարձր մակարդակ ունեցող հասարակությունների հետ.

- տղամարդու կողմից կնոջը սեփականաշնորհելու նորմերը
- ընտանիքում եկամտի վերահսկումը տղամարդու կողմից
- տղամարդու առնականության պատկերացումը՝ կապված գերիշխման հետ,
- մարդկանց կանացիության պատկերացումը՝ կապված ենթակայության հետ,
- տղամադու կողմից որոշումների կայացման վերահսկումը:

Հայաստանում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հարցվածների 35.7 %-ը, որից 44.6 %-ը տղամարդ են և 27.8 %-ը՝ կանայք, համաձայն են, որ կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության: Որոշ դեպքերում «կինը ծեծի

է արժանի» պնդման հետ համաձայն է հարցվածների 27.7 %-ը, որից 35.2 %-ը՝ տղամարդ և 21 %-ը կին են:[1]

Բռնությունը բռնություն է ծնում: Մարդիկ, որոնք բռնության են ենթարկվել կամ ականատես են եղել մանկական տարիքում, հիմնականում ագրեսիայի հակում են ձեռք բերում: Ի դեպ, պարզվել է հետևյալ օրինաչափությունը. որքան հաճախ են կանայք կամ տղամարդիկ մանկության տարիներին ենթարկվել կամ ականատես եղել ֆիզիկական բռնության, այնքան բարձր է եղել հետագայում բռնության կիրառման հավանականությունը ընտանիքում: Իրավիճակային սթրեսը կարող է անդրադառնալ նաև երեխաների հետ հարաբերությունների վրա: Երեխաների հանդեպ ֆիզիկական ուժ կիրառածների 68%-ը խոստովանել է, որ ծեծել է իր երեխաներին՝ լինելով սթրեսային վիճակում՝ կապված աշխատանքի կորստի, ֆինանսական դժվարությունների, հիվանդության կամ անձնական խնդիրների հետ:

Աշխարհում ամեն երրորդ կին, որը տուժել է ներընտանեկան բռնությունից, նշում է դրանց թվում հարկադիր սեռական հարաբերությունը: Ամերիկյան վերլուծաբանները նշում են ընտանիքում կատարվող սեռական բռնության երկու ձև. 1) կնոջ նկատմամբ 2) երեխայի նկատմամբ:

Բռնությունը խորապես ազդում է երեխաների վրա, անգամ եթե նրանք լռում են այդ մասին: Երեխան, որը բռնության է ենթարկվել կամ ականատես է եղել բռնության, կարող է դառնալ ինքնամփոփ, անհանգիստ կամ ճնշված:

Ներընտանեկան բռնության տեսարանները, երբ ծնողները ծեծում են միմյանց, նույնպես համարվում է բռնություն երեխայի նկատմամբ: Քանզի այդպիսի տեսարանները ծանր են անդրադառնում երեխաների հոգեկան աշխարհի վրա: Ապացուցված է, որ այդպիսի երեխաներից շատերը հետագայում ունենում են լուրջ հոգեբանական խնդիրներ՝ ընկճախտ, հարբեցողություն, թմրամոլություն և այլն:

Բացի այդ, երեխան կարող է ագրեսիվություն ձեռք բերել և այն արտահայտել ինչպես իր հասակակիցների, այնպես էլ ընտանիքի մյուս անդամների հանդեպ: Տանը

[1] Աղբյուր՝ *Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում,* ՄԱԲՀ, 2016թ

կատարված բռնությանը ականատես դարձած երեխաների գիտակցության մեջ այդ դեպքերը խորապես տպավորվում են՝ դառնալով ազդեցիկ, երկարատև հիշողություն:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ[2]

Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2019 թվականի ընթացքում ստացված ընտանիքում բռնության վերաբերյալ 796 ահազանգով կայացվել են նախազգուշացում, իսկ 260-ով՝ անհետաձգելի միջամտության որոշումներ: Կայացված պաշտպանության միջոցներից խախտվել է 124-ը, որից՝ 90-ի խախտման մասին ոստիկանությանը հայտնել է ընտանիքում բռնության ենթարկված անձը, իսկ 34-ը՝ հայտնաբերվել է ոստիկանության ծառայողի կողմից:

Պաշտպանության միջոցների խախտումների վերաբերյալ ՀՀ ոստիկանության տվյալների ուսումնասիրությունից կարելի է նկատել, որ խախտումների վերաբերյալ ահազանգերը հիմնականում շարունակում են ստանալ ընտանիքում բռնության ենթարկված անձանց կողմից և 124 խախտման դեպքերից միայն 34 դեպքն է ՀՀ ոստիկանությունը հայտնաբերել: Հետևապես, հաշվառման վերցնելու գործառույթը չափազանց կարևոր նշանակություն ունի անձի վարքագծի դրսևորումների մշտադիտարկման տեսանկյունից, ինչն ինքնին կանխարգելիչ ու պաշտպանական նշանակություն ունի:

Իրավասու մարմինների կողմից տրամադրված տվյալները վկայում են, որ ընտանիքում բռնությունն անհամամասնորեն ազդում է հատկապես կանանց վրա: Այսպես, ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում քննվել է ընտանիքում բռնության 485 դեպք, որից՝ կենակցի կողմից՝ 2, ամուսնու կողմից կնոջ նկատմամբ՝ 329, կնոջ կողմից ամուսնու նկատմամբ՝ 10, ծնողի կողմից զավակի նկատմամբ՝ 41, զավակի կողմից ծնողի նկատմամբ՝ 53, ընտանիքի այլ անդամների կողմից՝ 50 դեպք:

2019 թվականի ընթացքում քննված՝ ընտանիքում բռնության 485 դեպքից 469-ը ֆիզիկական, 14-ը հոգեբանական, 2-ը տնտեսական բռնության դեպքեր են, իսկ ըստ տարիքի՝

---

[2] Աղբյուր՝ *Տարեկան հաղորդում 2019 թվականի ընթացքում Հայաստանի հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եվ ազատությունների պաշտպանության վիճակի մասին:*

ընտանիքում բռնության ենթարկված անձանց հաշվառում չի իրականացվում: Նշված 485 դեպքերից քրեական գործեր են հարուցվել 126 դեպքով, 359 դեպքով քրեական գործի հարուցումը մերժվել է, որից 353-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով (բացակայում է դիմողի բողոքը), 3- ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով (անձը մահացել է), 2-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով (դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարճել են), 1-ը՝ համաներմամբ:

Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2019 թ.-ի ընթացքում ՀՀ ոստիկանությունում ստացված ընտանիքում բռնության վերաբերյալ 796 ահազանգով կայացվել են նախազգուշացումներ, իսկ 260-ով՝ անհետաձգելի միջամտության որոշումներ: ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում հարուցվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 418 քրեական գործ: ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 635 քրեական գործ: Ավարտվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 468 քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 326-ի վերաբերյալ վարույթը կարճվել է, որից 129-ը՝ արդարացման հիմքով, 197-ը՝ ոչ արդարացման հիմքով, 128-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ, 14-ը՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին որոշմամբ, կասեցվել է 33 քրեական գործի վարույթ, որից 18-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, 15-ը՝ այլ հիմքով:

Ըստ ՀՀ դատախազության տվյալների՝ 2019 թվականի ընթացքում ընտանիքում բռնության դեպքերի առթիվ հարուցվել է 458 քրեական գործ: Քրգործերի գերակշռող մեծամասնությունը ֆիզիկական բռնության դրսևորումներին են վերաբերում՝ 2019 թվականի ընթացքում դրանք կազմել են ընտանեկան բռնության դեպքերի շուրջ 96%-ը: Սա պայմանավորված է ինչպես հասարակական որոշակի ընկալումներով, որ ֆիզիկական բռնության դեպքում է, որ թերևս կարելի է արդարացնել տուժողի՝ իրավապահ մարմինների աջակցությանը դիմելու վարքագիծը, այնպես էլ ընտանեկան բռնության այլ տեսակների դեպքում քրեաիրավական համարժեք արձագանք ապահովող օրենսդրական հիմքերի բացակայությամբ:

Բայց նույն աղբյուրի համաձայն, բավական մեծ է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների տեսակարար կշիռը՝ ներկայացված հաղորդումների ընդհանուր քանակի հաշվառմամբ: Այսպես, 2019 թ-ի ընթացքում 359 դեպքով ընթացք չի

տրվել, ինչը կազմում է ընդհանուր դեպքերի շուրջ 74%-ը: Ավելին, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումները շուրջ 98% դեպքերում կայացվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով, այն է՝ բացակայում է դիմողի բողոքը:

Եվ, վերջապես, 2019 թվականի ընթացքում ավարտված 468 վարույթների շուրջ 69%-ը կարճվել է, իսկ կարճված գործերի շուրջ 60%-ը իրենց հերթին՝ ոչ արդարացման հիմքով:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ԵՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

COVID-19 համավարակը կանխարգելելու նպատակով աշխարհի բազմաթիվ երկրներում կիրառված տեղաշարժի սահմանափակումները և մեկուսացման ռեժիմը, համավարակն ուղեկցող սթրեսն ու անհանգստությունը հանգեցրին լրջագույն մի խնդրի՝ ընտանեկան բռնության դեպքերի աճի: Հատկապես ծանր վիճակում հայտնվեցին մինչ այդ էլ ընտանեկան բռնության ենթարկված անձինք, որոնց համար տունն ամենևին անվտանգ միջավայր չէր: Կարանտինի պայմաններում պարտադրված լինելով մնալ տանը բռնարարների հետ և չկարողանալով հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ՝ նրանք չէին կարող ակնկալել օգնություն և աջակցություն:

> «*Բազմաթիվ կանանց ու աղջիկների վտանգը սպառնում է հենց իրենց տներում, որտեղ նրանք պետք է ամենաապահովն ու անվտանգը լինեին: Այսօր ես կոչ եմ անում աշխարհի բոլոր տներում խաղաղություն հաստատել: Ես կոչ եմ անում բոլոր կառավարություններին առաջնահերթ դիտարկել կանանց անվտանգությունը*»:
>
> Անտոնիու Գուտերեշ, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար, 2020 թ.

ԱՇԽԱՐՀՈՒՄ. Տարբեր երկրների հրապարակած տվյալները վկայում են, որ համավարակի սկզբից ի վեր՝ մարտ և ապրիլ ամիսների ընթացքում կանանց նկատմամբ **բռնությունն աճել է միջինը 30 %-ով**:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան կարանտինի շրջանում արձանագրել է ընտանեկան բռնության առաջնային զանգերի 30% (մարտին) և 50% (ապրիլին) աճ: Ընդ որում, զանգահարել են թե՛ բռնության հետ կապված խորհրդատվության, և թե՛ սոցիալական աջակցության համար:

Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի իրականացրած «COVID-19-ի համավարակի ժամանակ պետության արձագանքն ընտանեկան բռնությանը» արագ գնահատումը բացահայտեց մի շարք խնդիրներ՝ կապված արտակարգ դրության իրավական ռեժիմի ընթացքում ընտանեկան բռնությանը պետական և հասարակական կառույցների արձագանքի և այդ կառույցների կարիքների հետ:

Ուսումնասիրությունն իրականացվել է 2020 թվականի ապրիլի 15-ից մինչև մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածը:

Բացահայտված խնդիրների շարքում են՝

- Ոստիկանության տվյալներով՝ արտակարգ դրության օրերին ընտանեկան բռնության դեպքերի թիվը չի աճել, մինչդեռ հասարակական կազմակերպություններն ահազանգում են առաջնային դեպքերի շուրջ 30-50% աճի մասին.
- ՀԿ-ներն ահազանգում են, որ արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող հերթապահ ոստիկանները տեղեկացված չեն ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող կառույցների կոնտակտային տվյալների մասին.
- Արտակարգ դրության շրջանում քաղաքականություն մշակողները չունեն մշակած հատուկ ծրագրեր կամ ընթացակարգեր ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար: Լրացուցիչ ֆինանսական միջոցներ ևս առանձնացված չեն.
- Պետական որևէ քաղաքականություն/ծրագիր, շարունակական իրազեկման արշավ կամ կանխարգելիչ միջոցառում դեռևս չեն իրականացվում ընտանեկան բռնության դեպքերին պատշաճ արձագանք տրամադրելու համար արտակարգ դրության շրջանում: Միայն Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն է, որ այս օրերին իրականացրել է իրազեկման որոշակի միջոցառումներ.
- Հայաստանում գործող 2 ապաստարանները, որոնք ստանում են նաև պետական համաֆինանսավորում, շարունակում են գործառնել արտակարգ դրության պայմաններում՝ ընդունելով նոր կանանց և երեխաների: Մարտ ամսին ապաստարաններում ապաստանել են 9 կին և 18 երեխա, ապրիլին՝ 10 կին և 9 երեխա.
- Ապաստարանները չունեն հատուկ պայմաններ և լրացուցիչ ռեսուրսներ նոր ապաստանվող կանանց և երեխաների 14-օրյա մեկուսացումն ապահովելու համար.

- Համավարակի ընթացքում ՀԿ-ների թեժ գծերի մասին տեղեկատվությունը հիմնականում տարածվում է սոցիալական ցանցերի միջոցով.

Արագ գնահատման արդյունքում ներկայացվել են առաջարկություններ՝ միտված համավարակի շրջանում ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանությանը: Առաջարկները հասցեագրված են Կառավարության պատասխանատու գերատեսչություններին, իրավապահ մարմիններին և դատական համակարգին, ծառայություններ մատուցող կառույցներին, ինչպես նաև պետական և հասարակական կառույցներին՝ իրազեկման և աջակցության այլընտրանքային միջոցների տրամադրման մասին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս ոլորտի հիմնախնդիրների հաղթահարման համարառաջարկվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

- Ապահովել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի կիրարկումը,
- Կյանքի կոչել Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի ՀՀ 5-րդ և 6-րդ պարբերական զեկույցների եզրափակիչ դիտարկումների շրջանակում արված հանձնարարականները,
- Բռնության մասշտաբների, պատճառների և հետևանքների, ինչպես նաև նրա կանխարգելմանն ու դադարեցմանն ուղղված արդյունավետ միջոցների վերաբերյալ տեղեկությունների հավաքում:
- Կանանց և աղջիկներին գենդերային բռնությունից պաշտպանելու համար անհրաժեշտ բոլոր իրավական և ուրիշ միջոցների ձեռնարկում, ներառյալ քրեական պատժամիջոցներ և պաշտպանության գործնական միջոցներ նախատեսող օրենսդրությունը, ապաստարանների տրամադրումը և խորհրդատվական օգնությունը, ինչպես նաև կանխարգելման քայլերը:
- Քարոզչական արշավների անցկացում՝ ուղղված կանանց նկատմամբ բռնությանը

նպաստող արմատացած վերաբերմունքի, կարծրատիպերի և նախապաշարումների հաղթահարմանը:

- Քրեական պատասխանատվություն, քաղաքացիական պատժամիջոցներ և փոխհատուցման մասին դրույթներ նախատեսող օրենքների ընդունում բռնության յուրաքանչյուր ձևից կանանց պաշտպանությունն ապահովելու նպատակով:
- Պաշտպանության տարբեր ձևերի տրամադրում. ապաստարաններ, հատուկ մասնագիտացած բուժանձնակազմի ծառայություններ, բռնության զոհերի և զոհ դառնալու վտանգի ենթակա անձանց արդյունավետ վերականգնում և խորհրդատվական օգնություն:
- Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ուղղորդման մեխանիզմի ձևավորում: